ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ԱՐՄԵՆԱԿ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Դանիելյան.

Ի պատասխան Ձեր 24.10.2024թ. հ.325-2024թ. գրության՝ հայտնում եմ.

«Երևանի հ.188 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Դպրոց) շենքի խնդիրների առնչությամբ գրություն է ուղղվել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն՝ Դպրոցի շենքի նորոգման հարցը որևէ առաջնահերթ ծրագրում ներառելու նպատակով: Արդյունքում Դպրոցի տանիքի նորոգման համար «Արագ արձագանքման ֆոնդի» շրջանակում հատկացվել է ֆինանսավորում:

Միաժամանակ, հաշվի առնելով Դպրոցին անհատույց օգտագործման իրավունքով ամրացված շենքի հիմնանորոգման անհրաժեշտությունը՝ առաջարկվել է Դպրոցն ընդգրկել ՀՀ կառավարության՝ մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների ծրագրում՝ խնդրին ողջամիտ ժամկետում հիմնավոր լուծում տալու նպատակով:

Հարկ է նշել, որ Երևանի ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացված շենքերի հիմնանորոգումը ՀՀ կառավարության կողմից իրականացվում է ըստ առաջնահերթությունների:

Ինչ վերաբերում է դպրոցի վերակառուցման աշխատանքների կատարումը Երևանի բյուջեով իրականացնելուն, ապա աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության աշխատանքային ծրագրերով դպրոցաշինական աշխատանքներ նախատեսված չեն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ